



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**  
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թ.

**ՈՐՈՇՈՒՄ N 68**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 7  
 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետով

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՛**

Հաստատել 25.12.2018 թվականի թիվ 7 հերթական նիստի օրակարգը.

1. Վայք համայնքի ավագանու 19/05/2017թ. «Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Փոռ գյուղում գտնվող խանութի շենքը անհատույց հանձնելու մասին» թիվ 29 որոշումը/նիստ N 5/ ուժը կորցրած ճանաչելու և Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Փոռ գյուղի 1-ին փող. թիվ 12 հասցեում գտնվող նախկին խանութի շենքը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:
2. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկի խճ. 51բնակ. շենքի թիվ 60 տարածքը նվիրատվություն կատարելու մասին:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող Վայք համայնք, ք. Վայք, Ջերմուկի խճ. 10/7 հասցեում գտնվող 10-003-0004-0363 ծածկագրով 307,9 քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը աճուրդով օտարելու վերաբերյալ:
4. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր սահմանելու մասին
5. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին
6. Համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, աշխատակազմի կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
7. Համայնքի բյուջեի նախահաշվում փոփոխություններ կատարելու մասին:
8. Համայնքի բյուջեի նախագծի քննարկում
9. ՀՀ Վայոց Ձորի մարզպետին կից երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին:

Կողմ -6

Դեմ -0


Ձեռնպահ -0


ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ 

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ 

ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ 

ՋԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ 

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ 

~~ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ~~  Թ. ԱՎԵՏՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**  
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թ.

**ՈՐՈՇՈՒՄ N 69**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19/05/2017 Թ. «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓՈՒԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻ ՇԵՆՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ 30 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 29 ՈՐՈՇՈՒՄԸ/ՆԻՍՏ N 5/ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓՈՒԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂ. ԹԻՎ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԻ ՇԵՆՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 21-րդ կետի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից 23.10.2018թ. տրամադրած անշարժ գույքի շուկայական արժեքի որոշման/գնահատման/ վերաբերյալ թիվ «<730-01/Վ-18>> հաշվետվությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ խանութի վերանորոգումից հետո բացվելու է նախնական 3 աշխատատեղ՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 19/05/2017թ. «Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Փոռ գյուղում գտնվող խանութի շենքը անհատույց 30 տարի ժամկետով հանձնելու մասին» թիվ 29 որոշումը/նիստ N5/:
2. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող Փոռ գյուղի 1-ին փող. թիվ 12 հասցեում գտնվող խանութի շենքը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
3. Հաստատել համայնքի ղեկավարի կողմից առաջարկված 1 240 000/մեկ միլիոն երկու հարյուր քառասուն հազար/ դրամ շուկայական արժեքը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ   
 ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ   
 ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ   
 ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ 

ՋԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Թ. ԱՎԵՏՅԱՆ



Որոշման նախագիծը նախապատրաստեց  
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ



ք. Աբովյան, Հանրապետության 14/16  
Տել. / ք.ա. (094) 26-00-08; (091) 70-09-00  
Էլ. փոստ՝ varmonrielti@mail.ru

г. Абовян, ул. Анрапетутян 14/16

«730-01/Վ-018»  
23 հոկտեմբերի 2018թ.

ՀՀ Արարատի մարզի Ոստան համայնքի  
բնակչուհի Շողիկ Ալոյանին

Ի պատասխան Ձեր 08.10.2018թ.-ի գրության՝ Ձեզ է տրամադրվում ՀՀ Վայոց Ձորի  
մարզի Փոռ համայնքի 1-ին փողոցի թիվ 12 հասցեում գտնվող անշարժ գույքի  
/հողատարածք և շինություն/շուկայական արժևրի որոշման /գնահատման/ վերաբերյալ  
հաշվետվությունը:

Առդիր՝ թիվ «730-01/Վ-018»  
հաշվետվությունը բաղկացած 09  
թերթից, լուսանկարչական  
հավելված՝ 1 թերթ:

Տնօրեն՝

Օ. Գևորգյան



# «Վ Ա Ր Մ Օ Ն Ռ Ի Ե Լ Թ Ի»

Բ. Աբովյան

23 Հոկտեմբերի 2018թ.

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն «730-01/Վ-18»

ԳՆԱՀԱՏՎՈՂ ՕԲՅԵԿՏԻ  
ԱՆՎԱՆՈՒՄԸ

Անշարժ գույք

ՀԱՍՅԵՆ

ՀՀ Վայոց Ձորի մարզ, Փոռ համայնք,  
1-ին փողոց, թիվ 24

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արարատի մարզի Ոստան համայնքի  
բնակչուհի՝ Շողիկ Ալոյան

ԿԱՏԱՐՈՂ

«ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹ» ՍՊԸ



ԱԲՈՎՅԱՆ 2018

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բովանդակություն.....	2
2. Գնահատման կատարման հիմքերը.....	3
3. Գնահատման ենթակա օբյեկտը, հասցեն.....	3
4. Գնահատման նպատակը.....	3
5. Գնահատման ժամանակահատվածը .....	3
6. Գնահատման գործընթացը.....	4
7. Գնահատվող օբյեկտի իրավական փաստաթղթերի փաթեթը .....	4
8. Գնահատվող օբյեկտի համառոտ նկարագրությունը .....	4
9. Գնահատման մեթոդի ընտրությունը.....	5
10. Գնահատում համեմատական վերլուծության մեթոդով.....	6
11. Եզրակացություն.....	8
12. Օգտագործված ինֆորմացիոն աղբյուրներ և գրականության ցանկ.....	8
13. Սահմանափակումներ և հատուկ պայմաններ.....	9



## Գնահատման կատարման հիմքերը

Գնահատումը կատարվել և սույն հաշվետվությունը կազմվել է ՀՀ Արարատի մարզի Ոստան համայնքի բնակչուհի Շողիկ Ալոյանի (հետագայում Պատվիրատու) պատվերով, «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼՏԻ» սահմանափակ պատասխանատվության ընկերության (հետագայում կատարող) կողմից:

Գնահատման կատարման համար հիմք է հանդիսացել Պատվիրատուի 08.10.2018թ.-ի դիմումը /ստացվել է 08.10.2018թ./, որի հիման վրա կատարողն իրականացրել է դիմումի մեջ նշված՝ անշարժ գույքի շուկայական արժեքի որոշումը:

## Գնահատման ենթակա օբյեկտը

Գնահատման ենթակա օբյեկտ է հանդիսանում ՀՀ Վայոց Ձորի մարզի Փոռ համայնքի 1-ին փողոցի թիվ 12 հասցեում գտնվող անշարժ գույքը /խանութի շինություն և հողատարածք/:

## Գնահատման նպատակը

Գնահատման կատարման նպատակն է պարզել ՀՀ Վայոց Ձորի մարզի Փոռ համայնքի 1-ին փողոցի թիվ 12 հասցեում գտնվող անշարժ գույքի շուկայական արժեքը:

## Գնահատման ժամանակահատվածը

Գնահատման աշխատանքները կատարվել են 2018 թվականի հոկտեմբերի 08-ից 23-ն ընկած ժամանակահատվածում:

## Գնահատվող օբյեկտի իրավական փաստաթղթերի փաթեթը

Դիմումի հետ կատարողին է տրամադրվել է սեփականության իրավունքի գրանցման թիվ 2737656 վկայականի պատճենը, ըստ որի ՀՀ Վայոց Ձորի մարզի Փոռ համայնքի 1-ին փողոցի թիվ 12 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 198,7քմ մակերեսով խանութի շինությունը և 300քմ մակերեսով հողատարածքը սեփականության իրավունքով պատկանում են Փոռ համայնքին:

## «Անշարժ գույքի գնահատում»

*/գնահատող մասնագետ՝ Ա. Մարտիրոսյան/*

Գնահատումը կատարվում է հետազոտությանը տրամադրված սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենում առկա չափաչիւն տվյալների և անշարժ գույքի տեղագրման, հետազոտման արդյունքների հիման վրա:

### Ընդհանուր տեղեկություններ

Գնահատման ամսաթիվը՝ 23.10.2018թ.:

Գնահատման նպատակը – շուկայական արժեքի որոշում:

Գնահատման գործառույթը – շուկայական արժեքի որոշում:

Անշարժ գույքի շուկայական արժեքը բաց և մրցակցային շուկայում, սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վաճառողի և Գնորդի գիտակցաբար, արդարացի առևտրի բոլոր պայմանների պահպանմամբ և օրինական գործողությունների արդյունքում ձևավորվող, անշարժ գույքի վաճառքի առավել հավանական գինն է, որը անշարժ գույքի գնահատման օբյեկտների համար կարող է որոշվել գնահատողի կողմից անշարժ գույքի գնահատմամբ:


Անշարժ գույքի շուկայական արժեքը հաշվարկային մեծություն է ամսաթվի դրությամբ և ունի խորհրդատվական բնույթ:



**Գնահատվող օբյեկտի համառոտ նկարագրությունը**

Անվանումը	շինություն /խանութ/
Հասցեն	Վլայոց Ձորի մարզ, Փոռ համայնք, 1 փող, թիվ 12
Ընդհանուր մակերեսը	198,7քմ
Հողատարածքի մակերեսը	300քմ
Օգտագործման նպատակը	խանութ
Հարկ/հարկայնություն	1հարկ
Շինությունների տիպը	տուֆ քարի շարվածքով
Ծննքի հիմքը	Երկաթբետոնյա ժապավենային և միաձույլ:
Տանիքածածկը	ազրեսայա թիթեղներ /ազրոշիֆերներ/վատ վիճակում :
Ծննքի միջհարկային ծածկը	Ե/Բ կողավոր սալերով
Դռները	չկա
Պատուհանները	չկա
Ներքին հարդարանքը	Պատերը գաջված, հատակը բետոնյա
Կոմունալ պայմաններ	անբավարար
Ընդհանուր վիճակը	անբավարար
Լրացուցիչ նշումներ	Տեղագնման պահին խանութի շինությունը գտնվում էր անբավարար աստիճանի վիճակում, բացակայում են միջնապատերը, տանիքից լցված ջրերի հետևանքով շինության միջհարկային ծածկը, պատերի շինանյութը և հատակի բետոնածածկը վնասվել են և կորցրել որակական հատկությունները:

***Ստորև ներկայացված է ՀՀ քարտեզից Վլայոց Ձորի մարզի հատվածը, որտեղ նշված է գնահատման ենթակա օբյեկտի գտնվելու մոտավոր վայրը /Փոռ համ/.***



**Գնահատման գործընթացը**

- Գնահատման գործընթացը իր մեջ ներառում է հետևյալ գործողությունները.
- օբյեկտի գտնվելու վայրի ուսումնասիրություն և վերլուծություն;
  - օբյեկտի տեղագնում, լուսանկարում, տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրում;
  - հարցազրույց սեփականատերերի հետ;
  - համապատասխան ինֆորմացիայի, տվյալների հավաքագրում, համեմատվող տարբերակների տեղագնում, ինֆորմացիայի մշակում և տվյալ գոտում անշարժ գույքի շուկայում իրադրության վերլուծություն;
  - անշարժ գույքի գնահատման կիրառելի մեթոդների ընտրություն և համապատասխան հաշվարկների կատարում;
  - գնահատման ամբողջական հաշվետվության կազմում՝ վերջնական արժեքի ներկայացումը:



**Հավագույն և առավել արդյունավետ օգտագործման տարբերակ**

Անշարժ գույքի առավել հավանական և առավել նպատակատար դիմաց օգտագործումը, որը ֆիզիկական հնարավոր է, իրավաբանորեն թույլատրելի, ֆինանսապես իրագործելի, ապահովում է անշարժ գույքի առավելագույն արժեքը:

Շուկայական արժեքի որոշման համար հիմք է հանդիսանում անշարժ գույքի լավագույն և առավել արդյունավետ օգտագործման վերլուծությունը (դիտարկումը):

Վերլուծության արդյունքում կարող են ի հայտ գալ օգտագործման մի քանի հնարավոր տարբերակներ, որոնք այնուհետև պետք է դիտարկվեն ֆինանսական նպատակահարմարության տեսանկյունից: Օգտագործման այն տարբերակը, որը կապահովի անշարժ գույքի առավել բարձր արժեքը, համարվում է առավել արդյունավետ տարբերակ: Հավագույն և առավել արդյունավետ տարբերակի ընտրությունը գնահատողի մասնագիտական կարծիքն է անշարժ գույքի օգտագործման վերաբերյալ:

Առավել արդյունավետ օգտագործման հասկացությունը հանդիսանում է հիմնարար, ինչպես նաև՝ շուկայական արժեքի հաշվարկման անբաժան մասը: Համաձայն «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն, անշարժ գույքի գնահատման հաշվետվության պահանջ է հանդիսանում անշարժ - գույքի լավագույն և առավել արդյունավետ օգտագործման վերլուծությունը, նրան պատկիրատուն նման վերլուծության ցանկություն հայտնել է: Գնահատման պատվերի համաձայն պատվիրատուն նման վերլուծության ցանկություն չի հայտնել:

**Անշարժ գույքի գնահատման մեթոդների նկարագրությունը և ըֆորությունը**

Անշարժ գույքի շուկայական գնահատման պրակտիկայում կջրատվում են 3 հիմնական մեթոդներ՝ համեմատական, եկամտային և ծախսային :

**Համեմատական մեթոդ**

Համեմատական մեթոդն իրենից ներկայացնում է գնահատման եղանակ, համաձայն որի անշարժ գույքի արժեքը որոշվում է՝ այն համեմատելով համանման և համադրելի անշարժ գույքի օբյեկտների հետ (առնվազն երեք միավոր), ինչպես նաև կարող են օգտագործվել ազատ շուկայում հրապարակայնորեն վաճառվող անշարժ գույքերի առաջարկի գները: Քանի որ առկա չեն վաճառված կամ առաջարկվող նմանատիպ գույքերի վերաբերյալ բավականաչափ և հավաստի տվյալներ, ուստի համեմատական մեթոդը չի կարող կիրառվել:

**Եկամտային մեթոդ**

Եկամտային մեթոդն իրենից ներկայացնում է գնահատման եղանակ, համաձայն որի անշարժ գույքի արժեքը որոշվում է՝ հիմնվելով նրա եկամուտ բերելու կարողության վրա: Գնահատման եկամտային մեթոդի հիմքում ընկած են փոխարինման և սպասումների սկզբունքները: Գնահատման եկամտային մեթոդը ներառում է երկու հիմնական եղանակ՝ եկամտի կապիտալիզացիա և դիսկոնտավորում: Քանի որ չունենք վարձակալության տրված նմանատիպ գույքերի վերաբերյալ բավականաչափ արժանահավատ տվյալներ, ուստի եկամտային մեթոդը չի կարող կիրառվել:

**Ծախսային մեթոդ**

Ծախսային մեթոդն իրենից ներկայացնում է գնահատման եղանակ, համաձայն որի անշարժ գույքի արժեքն որոշվում է որպես առանց բարելավումների հողամասի արժեքի և տվյալ հողամասի վրա առկա կառույցների վերարտադրման կամ փոխարինման ծախսերի հանրագումար՝ նվազեցված կուտակված մաշվածության չափով:

Այս մեթոդով հաշվարկի հիմքում ընկած են հետևյալ հիմնախնդիրները՝ գնահատման ենթակա օբյեկտի վերականգնողական արժեքի որոշումը, հողի արժեքի որոշումը՝ ելնելով հողի լավագույն և առավել արդյունավետ օգտագործման սկզբունքից, շենք-շինությունների ֆիզիկական, ֆունկցիոնալ, արտաքին մաշվածությունների հաշվարկումը:

**Շուկայական արժեքի հաշվարկ Ծախսային մեթոդով**

Անշարժ գույքի գնահատման ծախսային մեթոդը իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ՝

- հողամասի շուկայական արժեքի որոշում,



- շենքերի և շինությունների վերականգնման (վերարտադրման կամ փոխարինման) ծախսերի որոշում,
- շենքերի և շինությունների կուտակված մաշվածության մեծության որոշում,
- անշարժ գույքի շուկայական արժեքի որոշում (որպես հողամասի արժեքի և շենքերի ու կառույցների վերականգնման ծախսերի գումար՝ հանած կուտակված մաշվածությունը):

**Հողատարածքի գնահատման համեմատական մեթոդ**

Համեմատության Միավոր	Գնահատվող օբյեկտ	Համեմատ օբյեկտ N 1	Համեմատ օբյեկտ N 2	Համեմատ օբյեկտ N 3
<b>Տեղադրություն</b>	Վայոց Ձոր, Փոռ համայնք	Վայոց Ձոր, Վայք	Վայոց Ձոր, Եղեգնաձոր	Վայոց Ձոր, Գլաձոր համայնք
Վաճառքի, առաջարկի գին		1.440.000	1.210.000	450.000
Մակերև/քմ	300	1000	1210	800
1ք/մ գին		615	1000	562
Տվյալների աղբյուր		<a href="http://www.list.am">www.list.am</a> 9933371	<a href="http://www.list.am">www.list.am</a> 9684957	<a href="http://www.list.am">www.list.am</a> 9081305
Վաճառքի, առաջարկի ամսաթիվ		09.2018	09.2018	10.2018
Նպատակային նշանակությունը	հասարակական	քն. հասարակական	քնակավայրերի	տնամերձ
Ուղղում/%/		0	0	10
Ուղղված 1ք/մ գին		615	1000	674
Տեղադրություն/Էիրք	բավ	լավ	լավ	բավ
Ուղղում/%/		0	-10	0
Ուղղված 1ք/մ գին		615	900	674
Տրանսպորտային մատչելիություն	բավ	բավ	լավ	բավ
Ուղղում/%/		0	-5	0
Ուղղված 1ք/մ գին		615	855	674
Հողամասի տվյալներ (հողի ձև, կտրվածք, թևություն)	բավ	բավ	բավ	բավ
Ուղղում/%/		0	0	0
Ուղղված 1ք/մ գին			855	674
Հողամասի բարեկարգվածության աստիճան	բավ	բավ	բավ	բավ
Ուղղում/%/		0	0	0
Ուղղված 1ք/մ գին		615	855	674
Օբյեկտի 1ք/մ-ի միջինացված գին			714	
Համեմատվող գույքի արժեքը			214.200 կամ 214.000	

Համաձայն կատարված գնահատման արդյունքների հողատարածքի շուկայական արժեքը կազմում է 214.000 ՀՀ դրամ:

**Ընքի վերականգնման ծախսերի գնահատումը**

Ծախսային մեթոդով հաշվարկը կատարելիս որոշվում է գնահատման ենթակա օբյեկտի վերականգնողական արժեքը, հաշվարկվում են ֆիզիկական, գործարանական /ֆունկցիոնալ/ և տնտեսական մաշվածությունները:

Ընք-շինությունների վերականգնողական արժեքները որոշվում են հարադարձ հաշվարկային շինության նախարարության գնագոյացման կոնսուլտացիոն ինֆորմացիոն կենտրոնի կողմից ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուց



վածքների և շինարարական աշխատանքների տնտեսական արժեքի վերաբերյալ հրատարակված, խոշորացված ցուցանիշներ ձևնարկում նմանատիպ շինությունների կառուցման արժեքներից ելնելով:

Գնահատման ենթակա շինության պատերն իրականացված են տուֆ քարի շարվածքով ցեմենտ ավազային շաղախի կիրառմամբ, միջհարկային ծածկը՝ պանելային է: Տանիքածածկն իրականացված է ազբեստյա թիթեղներով:

Հետազոտվող օբյեկտի միավոր մակերեսի կառուցման արժեքի էլակետային ցուցանիշն ընդունվել է 78.000 ՀՀ դրամ:

Գնահատման ենթակա գույքի մակերեսը համաձայն հետազոտության տրամադրած սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենում արված գրառումների կազմում է 198,7քմ, ուստի դրա կառուցման արժեքը կկազմի  $198,7քմ \times 78.000 = 15.498.600$  ՀՀ դրամ, անտողակի ծախսերը հաշվի չեն առնվել:

Նշված արժեքը վերաբերում է նորակառույց շինություններին, իսկ հետազոտվող օբյեկտը նորակառույց չէ, ուստի անհրաժեշտ է հաշվի առնել նաև ֆիզիկական մաշվածությունը, ինչը կատարվում է համաձայն խոշորացված ցուցանիշներ ձևնարկում արտագրված տվյալների՝

**Ֆիզիկական մաշվածության հաշվարկ**

h/h	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՏԱՐԲԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌ	ՄԱՇՎԱՏՈՒԹՅԱՆ ՏՈՎՈՍ	ՄԱՇՎԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌ
1.	Հողային աշխատանքներ	3	40	1,2
2.	Հիմքեր	5,8	30	1,74
3.	Պատեր և միջնապատեր	37,5	80	30
4.	Միջհարկային ծածկ	12,5	30	3,75
5.	Տանիք	5,2	40	2,08
6.	Հարդարման աշխատանքներ	17,5	85	14,87
7.	Դռներ և պատուհաններ	10	80	8
8.	Սան. տեխ. աշխատանքներ	5,7	80	4,56
9.	Էլեկտրաաշխատանքներ	1,5	50	0,75
10.	Այլ աշխատանքներ	1,3	30	0,39
				67,34

Հաշվի առնելով աղյուսակի արդյունքը հետազոտվող շինության արժեքը ֆիզիկական մաշվածության հաշվառմամբ կկազմի՝  $(100 - 67,34) \times 15.498.600 / 100 = 5.061.842$  ՀՀ դրամ:

**Գործառնական (Ֆունկցիոնալ) մաշվածությունը** շենքերի, շինությունների արժեքի նվազումն է կապված տեխնիկական նորարարությունների, ժամանակակից պահանջներին անհամապատասխանության և գործառնական նշանակությամբ օգտագործման կորստով: Ըննքի որակական բնութագրերը ամբողջությամբ համապատասխանում անշարժ գույքի շուկայում ձևավորված արտադրական տարածքներին համապատասխանող պահանջներին, ժամանակակից շուկայական, շինարարական ստանդարտներին: Ըննքի ֆունկցիոնալ մաշվածությունը ընդունվել է **20% վերականգնման ծախսերից** կամ գումարային արտահայտությամբ՝ 3.099.720 ՀՀ դրամ:

**Տնտեսական մաշվածությունը** արտաքին միջավայրի պայմանների փոփոխության արդյունքում շենքերի, շինությունների արժեքի նվազումն է: Այս տիպի մաշվածությունը հետևանք է գնահատվող անշարժ գույքի վրա արտաքին գործոնների՝ շուկայական իրավիճակի (առաջարկի և պահանջարկի), ֆինանսական, օրենսդրական պայմանների փոփոխությամբ պայմանավորված արժեքի կորստի: Գնահատման կարծիքով գնահատվող գույքին նմանատիպ օբյեկտների պահանջարկի էական անկումներ չեն արձանագրվել: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև անշարժ գույքի այլ նպատակային նշանակության օբյեկտների:



կինում՝ գնահատողի կողմից կատարված դիտարկումները և վերլուծությունները, գնահատվող անշարժ գույքի արտաքին գործունեների ազդեցությամբ պայմանավորված մաշվածությունը շենքի համար ընդունվել է 6% վերականգնման ծախսերից կամ գումարային արտահայտությամբ՝ 929.916 ՀՀ դրամ:

Հետագոտվող շինությունների ընդհանուր արժեքն առկա ապրանքային վիճակում, առանց հողատարածքի արժեքի ներառման կազմում է՝

Մաշվածության տեսակը	Մաշվածության արժեքը / ՀՀ դրամ
Ֆիզիկական մաշվածությունը	10436757
Ֆունկցիոնալ մաշվածությունը	3099720
Տնտեսական մաշվածությունը	929916
Կուտակված մաշվածությունը	14466393

Այսպիսով, ծախսային մեթոդով ստացվեցին այսպիսի արդյունքներ՝

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի արժեքը / դրամ
1 Վերականգնման ծախսերը	15498600
2 Կուտակված մաշվածության արժեքը	-14466393
3 Վերարտադրման արժեքը կ1-կ2	1032207
4 Հողամասի շուկայական արժեքը	214000
5 Ծուկայական արժեքը	1.246.207 կամ 1.240.000

Անշարժ գույքի շուկայական արժեքը կկազմի 1.240.000 դրամ:

Վերոնշյալ անշարժ գույքի գնահատման ընթացքում մասնագետի կողմից կիրառվել է շուկայական արժեքի գնահատման ծախսային մեթոդը:

## Եզրակացություն

Կատարված հետազոտության, ուսումնասիրությունների արդյունքների և հաշվարկների համադրումից, գնահատողը հանգում է հետևյալ եզրակացության.

Գնահատման տրամադրած՝ Փոռ համայնքին սնփականության իրավունքով պատկանող /վկ.՝ թիվ 2737656/, ՀՀ Վայոց Ձորի մարզի Փոռ համայնքի 1-ին փողոցի թիվ 12 հասցեում գտնվող անշարժ գույքի ընդհանուր շուկայական արժեքը հետազոտության կատարման ժամանակահատվածի դրությամբ առկա ապրանքային վիճակում գնահատվում է՝

**1.240.000 (մեկ միլիոն նրկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:**

### Օգտագործված ինֆորմացիոն աղբյուրներ և գրականության գանկ

1. ՀՀ օրենսդրություն «ԱԳ գնահատման գործունեության մասին օրենք» ՀՕ-189-Ն:
2. ՀԱՏ 252 -2012թ. ՀՀ անշարժ գույքի գնահատման ստանդարտ:
3. ԱԳ առուվաճառքների և վարձակալությունների հետ կապված ամսագրեր, թերթեր:
4. Ռիելթորական գրասենյակների կողմից տրամադրված տեղեկատվություն:
5. «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի ինֆորմացիոն բազա:



Մահմանափակումներ և հատուկ պայմաններ.

Սույն հաշվետվությունը վավեր է միայն ամբողջությամբ: Առանձին մասերը, ինչպես նաև հավելվածները չեն կարող մեկնաբանվել առանձին, այլ միայն ներկայացված ամբողջականությամբ և միայն նշված նպատակներով:

Գնահատողը գործել է որպես անկախ կատարող:

Գնահատողի կողմից կատարված հետազոտությունները և եզրակացությունները ամբողջությամբ անկանխակալ են:

Գնահատողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված տվյալների հավաստիության համար:

Գնահատողի կատարած աշխատանքի վարձատրությունը կապված չէ գնահատման արդյունքի և եզրակացության հետ:

Գնահատողը պարտավորվում է պահպանել հետազոտության ընթացքում պատվիրատուի կողմից ստացված կամ հաշվարկների միջոցով պարզաբանված ինֆորմացիայի գաղտնիությունը:

Գույքի մասնատման կամ լրացուցիչ պարամետրերի ավելացման հետևանքով հնարավոր է գույքի արժեքի փոփոխություն, որի համար մասնագետը չի կարող պատասխանատվություն կրել :

Գնահատողի կարծիքը, գույքի արժեքի վարաբերյալ, ուժի մեջ է գնահատման ժամանակահատվածի դրությամբ և մասնագետը պատասխանատվություն չի կրում գույքի արժեքի հետագա կտրուկ փոփոխությունների համար, որոնք կարող են ի հայտ գալ այդ ժամանակահատվածից հետո՝ սոցիալական, ֆինանսական և տնտեսական գործոնների, կամ քաղաքական օրենսդրության փոփոխությունների հետևանքով:

Գնահատող

ՎԿ. N Ա. Գ. Գ. 239



Աննա Մարտիրոսյան

# Հ ՈՒ Ս Ա Ն Կ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ր




Լուսանկար 1



Լուսանկար 2



Լուսանկար 3



Լուսանկար 4



Լուսանկար 5





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՎԿԱՅԱԿԱՆ N ԱԳԳ 239**

**ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎՈՒՄ Է**

**ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿԻ ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ**



առ այն, որ նա մասնակցել է ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից կազմակերպված անշարժ գույքի գնահատման գործունեության մասնագիտական որակավորման ստուգմանը: Համաձայն ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի՝ «24» հուլիսի 2018թ. թիվ 168-Ա հրամանի ստացել է

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության  
անշարժ գույքի կադաստրի  
կոմիտեի ղեկավարի ժամանակավոր  
պաշտոնակատար՝

 Ա.Մուսայան

24 հուլիսի 2018թ.





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**  
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թ.

**ՈՐՈՇՈՒՄ N 70**

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
 ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԶԵՐՄՈՒԿԻ ԽՃՈՒՂԻ 51 ՇԵՆՔԻ ԹԻՎ 60 ՏԱՐԱԾՔԸ  
 ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԱՆ ՍԱՄԿԵԼԻ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ  
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղ. Արման Օհանյանը սկսած 2000թ. փաստացի տնօրինում է նշված տարածքը, և նա ցանկություն է հայտնել վերանորոգելու և շահագործելու, որի արդյունքում կստեղծվի նախնական 2 աշխատատեղ՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Տալ համաձայնություն՝ Վայքի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող /սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 05062018-10-0006/ ք. Վայք, Զերմուկի խճ. 51 շենքի թիվ 60 տարածքը՝ 15,11քմ մակերեսով Վայք քաղաքի բնակիչ Արման Օհանյանին նվիրատվություն կատարելու մասին քաղաքապետի առաջարկությանը:  
 Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0


ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ 

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ 

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ 

ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ 

ԶԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ 

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ 

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՆԱՎԱՐ**  **Թ. ԱՎԵՏՅԱՆ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**  
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թ.

**ՈՐՈՇՈՒՄ N 71**

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԶԵՐՄՈՒԿԻ ԽՃ. 10/9  
 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 10-003-0004-0363 ԾԱԾԿԱԳՐՈՎ 307,9 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ,  
 ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ  
 ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ  
 ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ

Ղեկավարվելով համայնքի ավագանու 2016թ. հոկտեմբերի 18-ի թիվ 2-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

- Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքի Զերմուկի ԽՃ.10/7 հասցեում գտնվող 10-003-0004-0363 ծածկագրով 307,9 քմ մակերեսով, բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը աճուրդով օտարելու վերաբերյալ հարցը հետաձգել՝ առաջիկա նիստերում քննարկելու նպատակով:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ԶԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**  
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թ.

**ՈՐՈՇՈՒՄ N 72-Ն**

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ 30-րդ կետերին և «Տեղական տուրքերի ու վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 12-րդ, 14-րդ հոդվածներին համապատասխան

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների 2019 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ


ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ՋԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**  **Թ. ԱՎԵՏՅԱՆ**



ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019Թ. ՍԱՀՄԱՆՎԱԾ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՑՔԱԶՈՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	ԴՐՈՒՑՔԱԶՈՓԸ				
	Վայք	գ. Ագատեկ	գ. Փոռ	գ. Ջեղեա	գ. Արին
<p>1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝</p> <p>ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար</p> <p>բ. սույն կետի &lt;&lt;ա&gt;&gt; ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝</p> <p>-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝</p> <p>-500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար</p>	15000	7500	7500	7500	7500
	30000	15000	15000	15000	15000
	50000	25000	25000	25000	25000

<p>-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր բնօրհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար</p> <p>-3000-ից և ավելի քառակուսի մետր բնօրհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար</p> <p>Գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար</p> <p>-մինչև 20 քառակուսի մետր բնօրհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝</p> <p>-20 և ավելի քառակուսի մետր բնօրհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար</p>	<p>50000</p> <p>100000</p> <p>3000</p> <p>5000</p>	<p>25000</p> <p>50000</p> <p>1500</p> <p>2500</p>	<p>25000</p> <p>50000</p> <p>1500</p> <p>2500</p>	<p>25000</p> <p>50000</p> <p>1500</p> <p>2500</p>	<p>25000</p> <p>50000</p> <p>1500</p> <p>2500</p>
<p>2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝</p> <p>ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի բնօրհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն</p>	<p>3000</p>	<p>1500</p>	<p>1500</p>	<p>1500</p>	<p>1500</p>
<p>Բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաշափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի բնօրհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի &lt;&lt;ա&gt;&gt; ենթակետով սահմանված դրույթաչափից,</p>					

<p>կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և դրույթաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով</p>				
<p>գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և դրույթաչափերը:</p>				
<p>3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քարաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝</p>	5000	2500	2500	2500
<p>4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար՝</p>	150000	75000	75000	75000
<p>5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հերուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար</p>	30000	15000	15000	15000
<p>6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վալրում մանրածախ առք ու վաճառք</p>	50000	25000	25000	25000



շինությունների ներսում վաճառքի կազմակերպման ղեկավարում							
-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման ղեկավարում	10500	7000	7000	7000	7000	7000	7000
-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման ղեկավարում	15750	10500	10500	10500	10500	10500	10500
-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման ղեկավարում	19500	13000	13000	13000	13000	13000	13000
-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման ղեկավարում	34500	23000	23000	23000	23000	23000	23000
8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար	262.5	175	175	175	175	175	175
9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, գվարճանքի, շահումով խաղերի և վիճակահաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացուցային տարվա համար							
ա. առևտրի օբյեկտների համար	50000	25000	25000	25000	25000	25000	25000
բ. հանրային սննդի և գվարճանքի օբյեկտների համար	75000	50000	50000	50000	50000	50000	50000
գ. բաղնիքների (սաունաների) համար	375000	250000	250000	250000	250000	250000	250000
դ. խաղատների համար	750000	500000	500000	500000	500000	500000	500000
ե. շահումով խաղերի համար	375000	250000	250000	250000	250000	250000	250000
զ. վիճակահաղերի համար	112500	75000	75000	75000	75000	75000	75000

<p>10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, համրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝</p>					
<p>ա. հիմնական շինությունների ներսում</p>					
<p>-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող համրային սննդի օբյեկտի համար՝</p>	3000	2000	2000	2000	2000
<p>-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող համրային սննդի օբյեկտի համար՝</p>	5250	3500	3500	3500	3500
<p>-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող համրային սննդի օբյեկտի համար՝</p>	9000	6000	6000	6000	6000
<p>-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող համրային սննդի օբյեկտի համար՝</p>	12750	8500	8500	8500	8500
<p>-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող համրային սննդի օբյեկտի համար՝</p>	18750	12500	12500	12500	12500
<p>-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող համրային սննդի օբյեկտի համար՝</p>	30000	20000	20000	20000	20000
<p>բ. ոչ հիմնական շինությունների ներսում</p>					
<p>-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող համրային սննդի օբյեկտի համար՝</p>	750	500	500	500	500
<p>-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող համրային սննդի օբյեկտի համար՝</p>	1500	1000	1000	1000	1000
<p>-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող համրային սննդի օբյեկտի համար՝</p>	3000	2000	2000	2000	2000
<p>-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող համրային սննդի օբյեկտի համար՝</p>	6000	3000	3000	3000	3000
<p>-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող համրային սննդի օբյեկտի համար՝</p>	11250	7500	7500	7500	7500
<p>-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող համրային սննդի օբյեկտի համար՝</p>	18750	12500	12500	12500	12500
<p>11) քաղաքային բնակավայրերում ավազանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար օրացուցային տարվա համար</p>	3750	0	0	0	0
<p>12) ավազանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական</p>					


տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջալետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝	1500	1000	1000	1000	1000	1000	1000
ա. ավտոմոբիլային սպիտակ պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	2626	1750	1750	1750	1750	1750	1750
բ. թունդ ավտոմոբիլային ( սպիտակ պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	0	0	0	0	0	0	0
գ. սոցիալական գովազդի համար	1125	750	750	750	750	750	750
դ. այլ արտաքին գովազդի համար	282	188	188	188	188	188	188
ե. դատարկ գովազդային վաճառականների համար համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,	113	75	75	75	75	75	75
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված գովազդի 10% չափով	75000	50000	50000	50000	50000	50000	50000
13) Հայաստանի Հանրապետության Վայք համայնքի գինանշանը, <<Վայք>>, <<Ագուտեկ>>, <<Փոռ>>, <<Զեղեխ>>, <<Արին>> անվանումները, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար օրացուցային տարվա համար	7500	5000	5000	5000	5000	5000	5000
14) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ էրթուղային տաքսիների միկրոավտոբուսների) ծառայություն							

իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար					
15) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար օրացուցային տարվա համար՝	375000	250000	250000	250000	250000
16) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար օրացուցային տարվա համար	1875000	1250000	1250000	1250000	1250000
ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	3750000	2500000	2500000	2500000	2500000
գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	5250000	3500000	3500000	3500000	3500000
դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար	7500000	5000000	5000000	5000000	5000000
17) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	37500	25000	25000	25000	25000
ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ					
1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	20000	10000	10000	10000	10000
2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց	15000	10000	10000	10000	10000

<p>վերականգնումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.</p>	15000	10000	10000	10000	10000
<p>3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.</p>	20000	10000	10000	10000	10000
<p>4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հասկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.</p>	15000	5000	5000	5000	5000
<p>5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.</p>	5000	2000	2000	2000	2000
<p>6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնխաճեղներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.</p>					
<p>7) Աղբահանության վճարը սահմանվում է՝ ա. բնակելի նպատակային նշանակության շենքերում և/կամ/ կոշտ կենցաղային թափոնների համար - ըստ հաշվարկված անձանց քանակի համայնքում/ անձնագրային հաշվարկան կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար</p>	100	50	50	50	50

-կամ ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար	20	10	10	10	10
Բ. ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և/կամ՝ շինություններում	70	35	35	35	35
-առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային անդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	30	15	15	15	15
-հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	15	7	7	7	7
-արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար-	15	7	7	7	7
-կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար	5000	2000	2000	2000	2000
8) համայնքային ենթակառուցվածքի մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.	4000	0	0	0	0
9) համայնքային ենթակառուցվածքի արտադրողական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվողների համար՝					
ա. արվեստի դպրոց					

	3000	3000	3000	3000	3000	3000
-դաշնամուր, վոկալ, ջութակ, կերպարվեստ	0	0	0	0	0	0
-դուրուկ, շվի, քանոն	0	0	0	0	0	0
-Միջազգային և հանրապետական մրցույթներում դափնեկրի համար, երկկողմանի ծնողագուրկ երեխաների համար, հաշմանդամ երեխաների համար, ՀՀ գինված ուժերում, Արցախյան պատերազմում գոհված զինծառայողների երեխաների համար	0	0	0	0	0	0
-Բազմանդամ ընտանիքից/3 և ավելի երեխաներ/ 3-րդ և նրանից ավել երեխաների համար	0	0	0	0	0	0
-Միաժամանակ 2 խմբում ընդգրկված երեխաների համար 1-ը 50%						
-Նույն ընտանիքից երկու երեխաների համար 1-ը 50%						
Բ. Մանկապատանեկան տեղծության կենտրոն	3000	0	0	0	0	0
- երկկողմանի ծնողագուրկ երեխաների համար, հաշմանդամ երեխաների համար, ՀՀ գինված ուժերում, Արցախյան պատերազմում գոհված զինծառայողների երեխաների համար	0	0	0	0	0	0
- Բազմանդամ ընտանիքից/3 և ավելի երեխաներ/ 3-րդ և նրանից ավել երեխաների համար						
- Նույն ընտանիքից երկու երեխաների համար 1-ը 50%						
